Արձանագրություն N 5
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» «Փետրվար» 2019թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Ա.Գրիգորյան, Հ.Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ներկայացված տեխնիկական բնութագրի շրկման առաջարկի մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ 05.02.19թ. առաջարկվել էր «ՀԱՏԻՔ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը: Սակայն սահմանված վերջնաժամկետին 06.02.19թ. ժամը 18:00 վերջինս ներկայացրել է գրություն (կցվում է) այն մասին, որ գնային առաջարկը ներկայացվել է միավոր արժեքով:

Հիմք ընդունելով Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետը, որոշվեց «ՀԱՏԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել.

- ✓ ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով,
- ✓ Վարդան Մկրտչյան Ֆեոդորի ԱՁ-ը՝ 11-րդ և 13-րդ չափաբաժինների մասով,
- ✓ «Լիմուշ» ՍՊԸ-ը՝ 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով,
- ✓ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ը՝ 4-րդ չափաբաժնի մասով,
- ✓ Դավիթ Քոչարյան ԱՁ-ը՝ 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով
- ✓ «Միսմա» ՍՊԸ-ը՝ 12-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին, Վարդան Մկրտչյան Ֆեոդորի, Դավիթ Քոչարյան ԱՁ-երին, «Լիմուշ», «Աստղիկ Գրատուն», «Միսմա» ՍՊԸ-ներին առաջարկել ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա (վերջնաժամկետ 13.02.19թ. ժամը 18:00) ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի, Վարդան Մկրտչյան Ֆեոդորի, Դավիթ Քոչարյան ԱՁ-երի, «Լիմուշ», «Աստղիկ Գրատուն», «Միսմա» ՍՊԸ-ների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ա.Գրիգորյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

HATIQ
PRINTING IMPORTING OUTDOOR

Ք. Երևան

05.02.2019թ.

N-3

ՀՀ առողջապահության նախարար

Պրն. Արսեն Թորոսյանին

Հարգելի պարոն Թորոսյան

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2019/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգում տեխնիկական խնդիրների պատճառով չափաբաժնի ընդհանուր արժեքի փոխարեն ներկայացվել է միավորի արժեք, ինչի հետևանքով դիմել ենք ֆինանսների նախարարություն եզրակացություն ստանալու համար:

Տնօրեն՝ Հայկ Յակոբյան

Ք.Երևան
Հ. Քանաքեռցու 50 | + 374 10 28 66 47 | info@hatiq.am
www.hatiq.am